

**ԾՐԱԳԻՐ**  
**Հայաստանի աշխարհագրություն-1**  
**(Միյուռքի համար)**

Հայկական լեռնաշխարհի տեղը, դիրքը Եվրասիա մայրցամաքում: Հայաստան, Հայք, Արմենիա անվանումների մասին: Հայաստանը հնագույն քարտեզներում:

**Հայկական լեռնաշխարհի բնությունը:** Բնության առանձնահատուկ գծերը: Երկրաշարժերն (Երզնկայի, Անիի, Ակոռիի, Սպիտակի) ու հրաբուխները (Թոնդրակ, Նեմրոթ) Հայկական լեռնաշխարհում: Հայաստանի գլխավոր հանքային հարստությունները (ոսկի-Մոքք, պղինձ-Ալավերդի, Կապան, մոլիբդեն-Քաջարան, քարածուխ-Օլթի, Կարին, կերակրի աղ-Կողբ, Երևան, տուֆ-Արթիկ, հանքային ջրեր-Ջերմուկ, Դիլիջան, Արզնի, Կարին): Հայկական լեռնաշխարհի **լեռները** (Քաջքար, Մարութասար, Սուկավետ, Աբուլսար, Նպատ, Մասիս՝ 5165մ, Սիս, Արագած՝ 4090մ, Կապուտջուղ), **լեռնաշղթաները** (Պոնտական, Հայկական Տավրոս, Սասնա, Հայկական Պար, Չանգեզուրի), **դաշտերը** (Երզնկայի, Ալաշկերտի, Մշո, Կարնո, Շիրակի, Արարատյան):

Հայկական լեռնաշխարհի ջերմային և խոնավացման պայմանները (ամենաբարձր ջերմաստիճան-Թավրիզ՝ 45<sup>0</sup>, ՀՀ-ում՝ Երասխա, Մեղրի՝ 42<sup>0</sup>, ամենացածր ջերմաստիճանը՝ Աշոցք-Պաղակն՝ -46<sup>0</sup>, ամենաշատ տեղումները՝ եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերին՝ 1000-3000մմ, ամենաքիչ տեղումները՝ Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորություններում՝ 200-250մմ):

Հայկական լեռնաշխարհի նշանավոր **գետերը** (Եփրատ, Տիգրիս, Արածանի, Արաքս, Ղոբոխ, Կուր, Ախուրյան, Հրազդան, Որոտան, Դեբեդ), **լճերը** (Ուրմիա, Վանա, Սևանա, Փարվանա, Գայլատու, Այդր, Վանա լճի կղզիները՝ Ախթամար, Լիմ, Կտուց, Առտեր), **ջրվեժները** (Թորթումի, Ջերմուկի, Շաքիի)

Հայկական լեռնաշխարհի **հողերը** (սևահողեր, գորշ հողեր), **բուսական** (հաճարենի, կաղնի, տորոն, ինչպես նաև՝ ցորենի, գարու, խաղողի, ծիրանի, դեղձի, նռան, նուշի, թզի հայրենիք) և **կենդանական աշխարհը** (մուֆլոն կամ վայրի ոչխար, բեզուարյան այծ, եղնիկ, վայրի խոզ, արագիլ, կռունկ, որդան կարմիր, վանա տառեխ, սևանա իշխան, կողակ, գետերի կարմրախայտ): Հողաբուսական ծածկի և կենդանական աշխարհի բազմազանության պատճառները:

Հայաստանի պատմական **«աշխարհներն»**(Այրարատյան, Տուրուբերան կամ Տարոն, Վասպուրական, Սյունիք կամ Սիսական, Բարձր Հայք կամ Կարնո, Չորրորդ Հայք, Աղձնիք, Մոկք, Կորճեք կամ Կորճայք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Գուգարք, Տայք) ու **նշանավոր գավառները**(Շիրակ, Արագածոտն, Մասյացոտն, Ոստան, Կոտայք, Նիգ, Տարոն, Տոսպ, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Կարին, Սասուն, Տավուշ, Տաշիր, Ջավախք), դրանց **հիշարժան վայրերը**(Բագարան, Ձիրավ, Կումայրի, Օշական, Ամբերդ, Կողբ, Բջնի, Մուշ, Հացեկաց, Խորնի, Արճեշ, Աղթամար, Ավարայր, Գողթն, Տաթև, Սևան, ):

Պատմական Հայաստանի **մայրաքաղաքները**(Վան, Արմավիր, Տիգրանակերտ, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Արշակավան, Գվին, Բագարան, Երազգավորս, Կարս, Անի, Երևան):

**Հայկական սփյուռքի աշխարհագրությունը` ԱՄՆ-Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Նյու Յորք, Վուսթեր, Ֆրեզնո, Փասադենա, Ֆրանսիա-Մարսել, Լիոն, Վալանս, Սիրիա-Հալեպ, Դամասկոս, Լիբանան, Իրան-Թեհրան, Սպահան, Կանադա, Արգենտինա, Ավստրալիա, Ռուսաստան-Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Վրաստան-Ջավախք, Թբիլիսի, Աջարիա, Ուկրաինա**

ՀՀ **տարածքը**(29,8 հազար քառակուսի կմ), **սահմանները**(Վրաստանի, Արցախի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի հետ): ՀՀ **մարզերը** (Շիրակ, Լոռի, Տավուշ, Արագածոտն, Կոտայք, Գեղարքունիք, Արմավիր, Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք), **մարզկենտրոնները**(Գյումրի, Վանաձոր, Իջևան, Աշտարակ, Հրազդան, Գավառ, Արմավիր, Արտաշատ, Եղեգնաձոր, Կապան): **Կառավարումը**(Սահմանադրություն, Նախագահ, կառավարություն, ազգային ժողով, տեղական ինքնակառավարում):

ՀՀ գլխավոր **քաղաքները**(Երևան, Գյումրի, Վանաձոր, Էջմիածին-Վաղարշապատ, Գիլիջան, Գորիս, Ջերմուկ, Ծաղկաձոր):

ՀՀ **հատուկ պահպանման տարածքները**(Խոսրովի, Էրեբունու, Շիկահողի արգելոցներ, Սևան, Գիլիջան ազգային պարկեր):

Հայաստանի **քնական**(Որոտանի, Քասաղի, Հրազդանի, Ախուրյանի, Ազատի կիրճեր, Սատանի կամուրջ, Եղեգնաձորի քարանձավներ, Ջերմուկի, Շաքիի ջրվեժներ, Քարի լիճ, Պարզ լիճ) և **պատմամշակութային** (Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Հռիփսիմե, Գայանե եկեղեցիներ, Մանահին, Հաղպատ, Ջվարթնոց, Խոր Վիրապ, Գառնի, Գեղարդ, Հաղարծին, Գոշավանք, Տաթև)**հուշարձանները**:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն- մայրաքաղաքը՝** Ստեփանակերտ, **պատմական քաղաքը՝** Շուշի, Մռավսարի լեռնաշղթա, Գոմշասար լեռնագագաթ, Արցախի լեռներ, Մեծ Քիրս լեռնագագաթ, Ճաղատսարի լեռնանցք, Թարթառ գետ, Սարսանգի ջրամբար, Ազոխի քարանձավ, Շուշիի սարավանդ:

**Պատմամշակութային հուշարձաններ-**Ամարաս, Գանձասար, Դաղիվանք, Շուշիի Դազանչեցոնց եկեղեցի:

**ԼՂՀ հիմնական արտադրանյութերն ու արտադրությունները-** գորգագործություն, շերամապահություն, մետաքսագործություն, գինու և օղու արտադրություն, խաղողի և զանազան մրգերի, հացահատիկի արտադրություն, փայտամշակություն:

## ԾՐԱԳԻՐ

### Հայաստանի աշխարհագրություն-2 (Հայաստանի և Արցախի մասնակիցների համար)

Հայկական լեռնաշխարհը՝ հայերի բնօրրան: Հայաստան, Հայք, Արմենիա անվանումների մասին: Հայաստան անվան երկու իմաստները: Հայկական լեռնաշխարհի տեղը երկրագնդի վրա: Հայաստանի աշխարհագրական հետազոտության պատմությունից:

Հայկական լեռնաշխարհի բնությունը: Հայկական լեռնաշխարհի բնության առանձնահատկությունները: Երկրաշարժերն ու հրաբխականությունը Հայկական լեռնաշխարհում: Հայաստանի գլխավոր հանքային հարստությունները: Հայկական լեռնաշխարհի մակերևույթի բնույթը. լեռները, լեռնաշղթաները, դաշտերը, սարահարթերը, ձորերը:

Հայկական լեռնաշխարհի ջերմային և խոնավացման պայմանները:

Հայկական լեռնաշխարհի նշանավոր գետերը, լճերը:

Հայկական լեռնաշխարհի հողաբուսական ծածկի և կենդանական աշխարհի առանձնահատկությունները:

Հայկական լեռնաշխարհի վարչական բաժանումները: Հայաստանի պատմական «աշխարհներն» ու նշանավոր գավառները, դրանց հիշարժան վայրերը:

Հայաստանի բնակչությունը: Պատմական Հայաստանի բնակչության տեղաբաշխումը: Բնակչության զանգվածային տեղաշարժերը: Մայրաքաղաքները:

Հայկական սփյուռքի աշխարհագրությունը:

ՀՀ տարածքը, սահմանները, պետական տարածքի և սահմանների ձևավորումը: Դիրքը քարտեզի վրա: ՀՀ վարչատարածքային կառուցվածքը: Կառավարումը:

ՀՀ բնությունը: ՀՀ բնության գլխավոր առանձնահատկությունները. մակերևույթի բնույթը, օգտակար հանածոները, կլիման, գետերը, լճերը, աղբյուրները, հողերը, բուսական և կենդանական աշխարհը:

ՀՀ բնակչությունը և տնտեսությունը: ՀՀ բնակչության թիվը, կազմը, տեղաբաշխումը, տարաբնակեցումը: Գլխավոր քաղաքները:

ՀՀ տնտեսության առանձնահատկությունները: Տնտեսության զարգացման բնական, տնտեսական, սոցիալ-քաղաքական նախադրյալները: ՀՀ տնտեսության գլխավոր ճյուղերը:

ՀՀ բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրները: ՀՀ հատուկ պահպանման տարածքները:

Լեռնային Ղարաբաղի հանրապետություն:

Հայաստանի բնական և պատմամշակութային հուշարձանները: